9407

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«16» 06 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0081-22

Ձեռնարկողը՝ ***<< ԿԱԿՈՅԱՆ >> ՍՊԸ***
ՀՀ Արարատի մարզ, Նոր Կյուրին 8 փ., 7 տ.

Գործունեությունը՝ ***Արարատի մարզի Սիս համայնքի ձկնաբուծական տնտեսության համար նախատեսված ավազանների վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

Արարատի մարզ, Մասիս համայնք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0081-22

< 16 **>** 06 **2022թ.**

«ԿԱԿՈՅԱՆ» ՍՊԸ-ի Արարատի մարզի Սիս համայնքի ձկնաբուծական տնտեսության համար նախատեսված ավազանների վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԿԱԿՈՅԱՆ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Նոր Կյուրին 8 փ., 7 տ.

Ներածական մաս. Վարչական տեսակետից նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Սիս համայնքում: Իրենից ներկայացնում է ընդարձակ հարթավայր, սահուն իջնելով դեպի հարավ-արևմուտք՝ դեպի Արաքս գետի հունը: Մոտակա բնակավայրերն են Ռանչպար, Նորամարգ, Արաքս, Հայկաշեն գյուղերը և Մասիս քաղաքը: Դիտարկվող տարածքը գտնվում է Սիս համայնքի Ձկնաբույծների փողոց 19 լճակների պատնեշ հասցեում(19.74654հա), որը դեռ Խորհդային միության ժամանակաշրջանում ծառայել և շահագործվել է որպես ձկնաբուծական տնտեսություն: Խորհրդային միության փլուզումից հետո տարածքը սեփականաշնորհվել է «Կակոյան» ՍՊ ընկերության կողմից և շարունակվել է շահագործվել որպես ձկնաբուծարան: Հաշվի առնելով Արարատյան դաշտավայրի ջրային ավազանի ջրային ռեսուրսների նվազումը և տարածքում գրունտային ջրերի մակարդակի բնական տատանումները, ընկերությունը ջրային ռեսուրսների խնայողաբար օգտագործման համար նախատեսում է խորացնել ձկնաբուծական տնտեսության ավազանները՝ օգտագործելով թե գռունտային և թե արտեզյան ավազանի ջրերը: Նախատեսվող գործունեության անվանումն է՝ Սիս համայնքում ձկնաբուծական տնտեսության ավազանների վերակառուցում: Նախատեսվող գործնեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության նպատակն է՝ թվով 10 ավազանների կառուցում և Գետածածան, Լոքո և Պնդաճակատ ձկնատեսակների բուծում: Վարչական տեսակետից նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Սիս համայնքում: «Կակոյան» ՍՊ ընկերությունը նոր հորատանցքի հիմնում չի նախատեսում: «Կակոյան» ՍՊ ընկերության տարածքը, որը նույնպես ունեցել է և ունի արտեզյան ավազանի ջրի հորատանք, որը ջրի սակավության պատճառով դեռ 6 տարի առաջ ձկնաբուծական նպատակով նախատեսված ջրի հորատանքի նպատակային նշանակությունը փոփոխվել է ոռոգման: Ձկնաբուծարանի կառուցապատման հիմանական նպատակը (մակերևույթային թափառող ջրերի ռեսուրսը օգտագործելով) թույլ է տալիս օգտագործելով սակավ խորքային ջրերը՝ ստանալ առավելագույն արժեք: Ընկերությունը դիտարկում է վերականգնել իր իսկ տարածքում առկա հորատանքի արտեզյան ավազանի ջրի նպատակային նշանակությունը՝ այն դարձնելով ձկնանուծական և երկրորդային ոռոգման նպատակով: Հարևանությամբ գտնվող տնտեսվարող սուբյեկտների հետ առկա է նախնական համաձայնություն արտեզյան ավազանի ձկնաբուծական նպատակով նախատեսված ջրի ավելցուկը համատեղ օգտագործման համար Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո դիտարկվում է նաև մակերևույթային թափառող ջրերի հիմքի վրա կառուցել մաքրիչ կայան: «Կակոյան» ՍՊԸ պատրաստվում է վերակառուցել (խորացնել) ձկնաբուծական տնտեսության համար նախատեսված ավազանը և հետագայում շահագործումը ավելի օպտիմալ դարձնելու նպատակով բաժանել այն թվով 10 ավազանների: Ավազաններում նախատեսվում է բուծել Գետածածան, Լոքո և Պնդաճակատ ձկնատեսակներ: Այս ձկնատեսակները հատուկ են տարածաշրջանին և ինվազիվ տեսակ հանդիսանալու ռիսկ չեն պարունակում: Ձկնատեսակներին բնական կենսամիջավայր ապահովելու համար ավազանները կկառուցվեն ափերից աստիճանաբար խորացումով, որտեղ առավելագույն խորությունը ավազանների միջնամասերում կկազմի 3.5-4մ ըստ ռելիեֆի: Ավազանների միջնամասերում նման խորությունները հատուկ են ընտրված, որը հնարավորություն կտա այդ հատվածներում ջրաբուսականության չառաջացման և ավազանները ճահճացումից հնարավարինս զերծ պահելու համար: Ավազանների նման տեսքը կխթանի ափամերձ հատվածների բնական տրոֆիկ շղթայի ձևավորմանը, ինչը կհանդիսանա սնման աղբյուր և ձվադրավայր ձկների համար: Արդյունքում կստեղծվի ամբողջովին բնական կենսամիջավայր ձկների բնական վերարտադրության համար, որտեղ ձկների բնականոն աճը ապահովելու համար հավելյալ արհեստական կեր տալու անհրաժեշտություն չի առաջանա, ինչն էլ իր հերթին չի հանգեցնի ավազանների ճահճացման և կբացառի գարշահոտի տարածումը: Ավազանները կկառուցվեն փուլերով՝ 24 ամիսների ընթացքում, ինչը ժամանակ կտա ձկնատեսակների համար ավազաններում բնական կեսամիջավայրի ձևավորմանը: Ավազանների կառուցումն իրականացվելու է կապալառու կազմակերպության միջոցով, որի հետ կնքված է նախնական պայմանագիր: Ավազանների կառուցման համար բետոնային աշխատանքներ չեն նախատեսվում: Թափոնների ծավալը նվազեցնելու նպատակով կապալառու կազմակերպության հետ կնքված նախնական պայմանագրի համաձայն ավազանների փորման աշխատանքների ընթացքում առաջացած հողագրունտի մի մասը կօգտագործվի շինարարության ժամանակ խախտված տարածքների վերականգման, ավազանների եզրային բերմաների բարձրացման, և առկա ճանապարհների բարեկարգման նպատակով: Իսկ մնացած մասը կտրամադրվի (չօգտագործված շինարարական թափոնները, հողագրունտ) նույն ընկերությանը տեսակավորման և վերամշակման համար: Աշխատանքների ավարտին

02543153
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

չօգտագործված և չվերամշակված թափոնները (հողագրունտ) համապատասխան իրավասություն ունեցող մարմնի հետ համաձայնությամբ կտեղադրվի իրենց իսկ կողմից հատկացված վայրում:

Գործունեության նախատեսվող տեղամասի անկյունային կետերի կոորդինատներն են՝

Կոորդինատներ ARM WGS84		
N	X	Y
1	8444055.0209	4434957.1207
2	8444275.6752	4435258.1564
3	8444299.4175	4435255.4191
4	8444351.6714	4435249.3948
5	8444388.3423	4435245.1670
6	8444433.7308	4435239.9324
7	8444767.4994	4435201.3310
8	8444756.1805	4435074.6106
9	8444737.6096	4434866.6648
10	8444623.4774	4434882.4933
11	8444396.6727	4434913.9477
12	8444395.3639	4434900.6261
13	8444390.4205	4434901.4467
14	8444138.4399	4434943.2737
15	8444080.2508	4434952.9327
16	8444063.2239	4434955.7590

Մթնոլորտային օդի մոնիթորինգի դիտակայան նախատեսվող գործունեության տարածքի մոտակայքում չկա, սակայն համաձայն «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկի՝ կարելի է ընդունել տարածքի օդի ֆոնային աղտոտվածության հետևյալ ցուցանիշները՝ փոշի՝ 0.2մգ/խմ, ծծմբի երկօքսիդ՝ 0.02մգ/խմ, ազոտի երկօքսիդ՝ 0.008մգ/խմ, ածխածնի օքսիդ՝ 0.4մգ/խմ: Շինարարության ընթացքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն շինարարական տեխնիկաները, սակայն քանի որ դրանց ինտենսիվությունը ցածր է, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ: Նախատեսվող գործունեության տարածքերում տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը սահմանված է 79ԴԲԱ(համաձայն գործող ներմերի): Հաշվի առնելով նախատեսվող գործունեության տարածքի հեռավորությունը բնակավայրերից, գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը բնակավայրի սահմաններում կգտնվի նորմայի սահմաններում (նորման 45ԴԲԱ): Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արաքս

02543163
ՓՈՐՁԱՓՈՐՁՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

գետի ձախափնյա մասում(հայցվող տարածքից 330մ հեռավորության վրա): Ըստ Շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացվող մշտադիտարկումների՝ Արաքս-Հրազդան գետի թափման վայրում ջրերի ընդհանրական որակը գնահատվել է որպես վատ՝ 5-րդ դասի, ինչը պայմանավորված է ԹԿՊ, նիտրատ իոնի, կոբալտի, երկաթի, կալցիումի, բարիումի, նատրիումի, ԸԱԱ, քլորիդ իոնի, ԸԼԱ, ԿՆ, ֆոսֆատ իոնի, նիտրիտ իոնի, սուլֆատ իոնի, ընդհանուր ֆոսֆորի, ամոնիում իոնի, մանգանի և վանադիումի պարունակությունների գերազանցումներով: Նախատեսվող գործունեության տարածքը ներկայացված է աղուտ-ալկալի հողերով: Աղուտ-ալկալի հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրի խոնավ և գերխոնավ հատվածներում, որտեղ գրունտային ջրերը հանքայնացված են և գտնվում են երկրի մակերեսից 0,5-2.5մ խորության վրա: Դրանց ընդհանուր մակերեսն Արարատյան հարթավայրում կազմում է 24հազ.հա: Տվյալ տարածաշրջանը ենթարկված է անտրոպոգեն ազդեցության: Տարիներ շարունակ ուսումնասիրվող տարածքը շահագործվել է որպես ձկնաբուծարան, հարակից տարածքները և շրջապատող լանջերը օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով: Այս ամենը հանգեցրել է նրան, որ նախատեսվող գործունեության տարածքի հարակից տարածքներում բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են: Տեղամասում բացակայում են ինչպես հազվագյուտ էկոհամակարգեր, այնպես էլ կենդանիների և բույսերի հազվագյուտ տեսակներ: Բուն ուսումնասիրվող և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներ չկան: Ուսումնասիրվող տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում: Բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան նաև հայցվող տեղամասին հարակից տարածքներում: Արարատի մարզում, հայցվող տեղամասից մոտ 20կմ հեռավորության վրա, գտնվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, որը հիմնադրվել է 1958 թվականին: Սիս համայնքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները ունենալու են ժամանակավոր, կարճատև բնույթ և շինարարական աշխատանքների ավարտից հետո կիրականացվեն վերականգնման աշխատանքներ, որոնք թույլ կտան գործնականում ամբողջությամբ վերացնել բացասական ազդեցությունները: Ազդեցությունների նվազեցումը և բացառումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ և կազմակերպելով աշխատանքների մոնիթորինգ: Տնտեսվարողը պարտավոր է գործող նորմատիվներին համապատասխան ապահովել անվտանգության կանոնները՝ կանխարգելող, մեղմացնող միջոցառումների (մաքրող սարքավորումների, վնասազերծող կայանքների, արգելափակող միջոցների, օդափոխության, թափոնների վնասազերծման, սանիտարական գոտիների և այլն) միջոցով: Շինհրապարակներում աշխատող տեխնիկայի շարժիչների վառուցքները պետք է լինեն կարգավորված՝ անսարք մեքենաների շահագործումը պետք է արգելվի, մեքենաների շարժիչների գազերի արտանետման վրա պետք է տեղադրված լինեն կատալիտիկ չեզոքացուցիչներ, ինչը թույլ կտա կրճատել գազերի արտանետումը մթնոլորտ, թափոնները պարբերաբար դուրս բերել շինարարական տարածքից և տեղադրել հատուկ նախատեսված հարթակներում, արգելվում է արտհրապարակից դուրս խախտել լրացուցիչ տարածքներ, տեղադրել թափոններ և այլն: Շինարարական հրապարակները ցանկապատել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով, շինհրապարակից դուրս եկող

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԿԵՆՏՐՈՆ - ՍՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՓՈՐՁԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

մեքենաների անվադողերը լվանալ, պարտադիր կարգով շինանյութերը, ավելցուկ գրունտը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով, շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել, պարբերաբար իրականացնել տեխնիկայի շարժիչների կարգաբերում, զտիչների տեղադրում, չոր եղանակների ժամանակ իրականացնել խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում, հակահրդեհային միջոցառումների կիրառում, փոշենստեցման համար ջրցանը իրականացվում է այնպիսի ծավալներով, որ չառաջանա արտահոսք: Շինարարության ողջ ընթացքում ընկերության կողմից իրականացվելու են մշտադիտարկումներ՝ հայտում ներառված բոլոր միջոցառումների ժամանակին և ճշգրիտ իրականացման, շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված: Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնհանել 500.0 հազ.դրամ:

Պատճառաբանական մաս. Արարատի մարզի Մասիս համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Ձկնաբուծական տնտեսության համար նախատեսված ավազանների վերակառուցման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների այրումը խստիվ արգելվում է: Թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով :
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- բացառել ձկնաբուծարանի շահագործումը առանց անհրաժեշտ համապատասխան ջրօգտագործման թույլտվության,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը,
- մինչև գործունեության իրականացումը Սիս համայնքից ստանալ համապատասխան համաձայնեցումներ՝ շինարարական աղբի և թափոնների հեռացման վայրերի վերաբերյալ,
- նախատեսվող գործունեության և հետագա շահագործման ընթացքում պահպանել և առաջնորդվել Ջրային օրենսգրքի հոդվածներում ամրագրված պահանջներով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԿԱԿՈՅԱՆ» ՍՊԸ-ի Արարատի մարզի Սիս համայնքի ձկնաբուծական տնտեսության համար նախատեսված ավազանների վերակառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Վ. Հարությունյան